ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТР ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

MINISTER OF DEFENCE OF
THE REPUBLIC OF ARMENIA

«22» 09 2017 թ.
Ֆ/Ա/3171

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ
Է. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

Քննության առնելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 11.09.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/32 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը 19.09.2017թ. կայացած նիստում որոշեց «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով մերժել «Ռեալ-Բուսինեսս» ՍՊԸ-ի հայտը և առաջին տեղ զբաղեցնող ճանաչել հաջորդ տեղ զբաղեցնող «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին:

Կից ներկայացվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏՄ N 42916
23. 09 2017թ.

ք.Երևան, 0044, Բագրևանդի 5, Հեռ.(+374) 10 29-44-01, Ֆաքս (+374) 10 29-43-12
Yerevan city, 0044, Bagrevand 5, Phone: (+374) 10 29-44-01, Fax: (+374) 10 29-43-12 г.Ереван, 0044, Багреванда 5, Тел.: (+374) 10 29-44-01, Факс: (+374) 10 29-43-12

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19-ը սեպտեմբերի 2017թ.
ժամը 14^{30}

Ընդունել ի գիտություն, որ համապատասխան հրամաններով հանձնաժողովի կազմում տեղի ունեցել փոփոխություն:

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,

Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ռեալ-Բուսինեսս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/32 որոշումը քննարկելու վերաբերյալ.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Ռեալ-Բուսինեսս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/32 որոշումը քննարկելու վերաբերյալ.

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Ռեալ-Բուսինեսս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/32 որոշումը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Ռեալ-Բուսինեսս» ՍՊԸ-ի-ի հայտը՝ հետևյալ հիմնավորմամբ. մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում որպես «ԱԱՀ» ներկայացված գումարը արտահայտված է միայն թվերով՝ տառերով արտահայտված չէ:

1.2 Հանձնաժողովը որոշեց «Ռեալ-Բուսինեսս» ՍՊԸ-ի մերժման արդյունքում 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ին և վերջինիս առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Վ. Գասպարյան
Գնահատող		Ն. Հարությունյան
Գնահատող		Ս. Նիկոլյան
Գնահատող		Կ. Բրուտյան
Գնումները համակարգող՝		Ռ. Մարդոյան